ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏԺԻ ԴԷՄ

Ամենասարսափելի, ամենազզուելի ոճրագործութիւնն է մարդասպանութիւնը։ Մեզ վրայ ամենամեծ սոսկում է ազդում մարդկային արիւնը և չկայ մի կրօն, որի հիմնական օրէնքների մէջ առաջնակարգ տեղ չունենայ չըսպանելու պատգամը։ Մի երկրի, մի ազգի բարոյական մակերեսը կարելի է չափել կատարուած ոճրագործութիւնների թուով, վրէժխնդրութեան ձևով և պատիժների տեսակով։ Երբ սովածի մէկը այս կամ այն անձնական միտումներով, անձնական հաշիւներով և շատ անգամ նոյն իսկ սպանուողի ձեռքով վարժուած և նրա իսկ զէնքով սպանութիւն է գործում, ինքն ըստ ինքեան սարսափելի է։ Բայց երբ մի հասարակութիւն, մի պետութիւն, ոչ մի հաշիւ չունենալով, իրեն յայտարարում է այնքան ուժասպառ, այնքան թոյլ և այնքան զուրկ յանցաւորներին պատուհասելու և ուղղելու միջոցներից, որ իւրաքանչիւր քայլափոխում մահուամբ է պատժում և կախում կամ գնդակահար անում, մարդկանց շատ աւելի զզուելի և ծանր տպաւորութիւն է թողնում, քան սովորական մարդասպանութիւնը։ Մահուան պատիժը ոչ մի ժամանակ գոհունակութեան զգացմունք չի առաջ բերել հանդիսատեսների մէջ, նրանք այդ բոպէներին երբէք չեն գոհացել այդպիսի արդարադատութիւնից և զզուանքով հեռացել են այդպիսի պատժից ցաւակցութեան արցունք թափելով յանցաւոր պատժուածների համար։

Մեր երկրում ամենայն տեղ զինուորական դրութիւն և սաստկացրած պաշտպանութիւն մտցնելու շնորհիւ այնքան արիւն թափուեց, որքան սովորական դարձաւ անտեղի մահուան պատիժը, որ իւրաքանչիւր մարդու որդին ծանրացաւ, դիզուեց այդ մահուան կոչմարը և հարկադրեց հանդէս գալ որպէս քաղաքացի և գոչել, որ վերջ դրուի այդ անպատուաբեր, պետական վրէժխնդրութեան։

Ամբողջ Ռուսաստանը բողոքում է այդ սոսկալի երևոյթի դէմ, բողոքում է մանաւանդ նրա համար, որ մահուան պատիժը գործ է դրւում նաև քաղաքական որոշ համոզումների, քաղաքական այն յանցաւորների դէմ, որոնք անհատաբար ձեռք են բարձրացնում հրապարակական ոճրագործների և բռնակալ վարիչների դէմ. որոնց աստարեզից հեռացնելու ոչ մի միջոց չունին։

Մեզանում էլ լսուեց այդ տեսակ պատիժների դէմ բողոքելու կոչը. հայ մայրերին և ինտելիգէնտներին էլ առաջարկուեց հանդէս գալ իրենց ուժեղ բողոքով, բայց ցաւելով պէտք է ասել, որ չը գտնուեց ոչ մի խումբ, որ բողոքէր, ճչար և պահանջէր վերացնել այդ բարբարոսական սովորութիւնը, հնութեան այդ անպատուաբեր մնացորդը։ Նրանք այս վերջին դառը տարուայ ընթացքում այնքան կոտորածներ էին տեսել, այնքան արիւն և արցունք էին տեսել թափած, որ մարդկանց արիւնը, դատաստանով մարդասպանութիւնը կարծես այլ և չէր աղդում նրա վրայ։ Բայց դա ցաւալի, շատ տխուր երևոյթ է և բացասական նշան մեր բարոյական աստիճանացոյցին։ Մարդուս արիւնը մի ուրիշ տեսակ հեղուկ է. նա ոչ մի տեղ ղուր չի թափուել և չի էլ թափուիլ։ Նրա թափողները երբէք աղատ չեն մնացել պատուհասից և պատժուել են շատ խիստ կերպով։ Ամեն տեսակ բռնութեան և անարդարութեան դէմ պարտաւոր է բողոքել քրիստոնէական եկեղեցին, պարտաւոր է բողոքել հոգևորականութիւնը, որ իւր վրայ է վերցրել աւետարանական սիրոյ և ներողամտութեան քարոզչի պարտաւորութիւնը։ Նա պարտաւոր է հանդէս գալ ուժեղ կոչով և պահանջով՝ վերացնել այդ սոսկալի երևոյթը, վերացնել մեր օրէնսդրութիւնից մահուան պատիժը, դադարել ձեռք բարձրացնելուց այն ամենամեծ գանձի՝ մարդուս կեանքի դէմ, որը Աստուծոյ ամենաբանչելի պարգև է և ոչ ոք այլ ևս վերադարձնել չի կարող։ Արարատի խմբագրութիւնը կոչ է կարդում, բոլոր հայ հոգևորականներին հանդէս գալ մահուան պատժի դէմ ուղղուած քարոզով, կազմել համախոսականներ և

դիմումներ և ուղղել իրեն, խոստանալով այդ ձայները՝ որպէս Հայաստանեայց եկեղեցու ձայն, միացնել ռուս լուսամիտ դասակարգի ձայներին և այդպիսով հասցնել ուր հարկն է, որպէս զի ջնջուի անարգ մահուան պատիժը մեր օրէնսդրութիւնից և չ՝արատաւորի քրիստոնէի խիղճը՝ արդարադատութեան մեծադղորդ անուան ներքոյ։

Կորչի մահուան պատիժը, կորչի կախաղանն ու դընդակահարութիւնը։ Միացրէք ձեր և ձեր ժողովրդի ձայնը, արժանաւոր հովիներ, մի մոռանաք, որ բազմութեան ձայնը Աստուծոյ ձայն է և կենսաբեր։

Ե. ծ. վ. Մ.

Ա.ՅՂԸՐ ԳԵՕԼ

(Մոպասանից 3ից էջ.)

Արագածից դէպ հարաւ
Բարձրաւանդակ մի տեղում
Շատ բարեհամ ջրոց հետ
Կայ մի ծովակ նահապետ.
Եւ ինչպէս որ ասում են
Մեր աշխարհի դարևոր
Վէպ ու զրոյցք բիւրաւոր,
Նա կոչւում է Այղըր գեօլ։

Աննման է Այղըր գեօլ,
Զունի մի բան իւր բոլոր՝
Որ չըլինի փառաւոր.
Աննման է Այղըր գեօլ,
Զունի մի բան հին ու նոր՝
Որ չը՝լինի ահաւոր։